



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

11.08.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/24

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ) քննելով «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 31.07.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/24 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Գազկոմշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գազկոմշին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 31.07.2017թ. բողոքով հայտնել է, որ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 13.05.2017թ. հայտարարվել է «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը սահմանված կարգով և ժամկետում մասնակցության հայտ է ներկայացրել Ընթացակարգին:

Հայտերի բացումը տեղի է ունեցել էլեկտրոնային եղանակով՝ համակարգի միջոցով 07.07.2017թ.: Ընկերության հայտում առկա վճարման պահանջագիրը և տուժանքի մասին

համաձայնագիրը սահմանված կարգով ստորագրվել է տնօրենի կողմից՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որին կցվել է նաև տնօրենի հայտարարությունն այն մասին, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի բանկային փաստաթղթերի ստորագրման բացառիկ իրավունքը պատկանում է միայն տնօրենին (պատճենը կցվել է): 19.07.2017թ. Ընթացակարգի հայտերի բացման նիստի թիվ 2-2 արձանագրության մեջ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Ընկերության կողմից միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնագիրը ստորագրած չէ հաշվապահի կողմից, ինչպես նաև տնօրենի հայտարարությունը բանկային փաստաթղթերը ստորագրելու բացառիկ իրավասության վերաբերյալ ավելի ուշ է ստորագրվել, քան հայտի ապահովման վճարման պահանջագիրը:

«Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 25.07.2017թ. ժամը 12:58-ին գնահատող հանձնաժողովին էլեկտրոնային փոստով ուղարկվել է պարզաբանում (պատճենը կցվել է) առ այն, որ 06.07.2017-20.07.2017թթ. Ընկերության հաշվապահ Մարգարիտ Աբոյանը գտնվել է հերթական արձակուրդում և Ընկերության հաշվապահի պարտականությունները դրված են եղել Ընկերության գործադիր տնօրեն Մաքսիմ Թեմուրի Միսակյանի վրա (հրամանի պատճենը կցվել է), ուստի հայտի ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը ստորագրվել է միայն Ընկերության տնօրենի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.07.2017թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 2-4 արձանագրությամբ Ընկերության հայտը մերժվել է նույն պատճառաբանությամբ:

Ընկերությունը գտնում է, որ իր կողմից «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով բաց ընթացակարգին ներկայացված հայտը համապատասխանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, մասնավորապես ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանի «գ» ենթակետի համաձայն՝ եթե հաշվապահական հաշվառումը վարում է կազմակերպության ղեկավարն անձամբ, ապա տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվում է առանց հաշվապահի ստորագրության: Ընդ որում, եթե տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացված է միայն կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, նկատի ունենալով, որ տվյալ դեպքում հաշվապահական հաշվառումը վարում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված այն փաստը, որ բանկային փաստաթղթերի ստորագրման բացառիկ իրավասության վերաբերյալ տնօրենի հայտարարությունն ավելի ուշ է ստորագրվել, քան հայտի ապահովման վճարման պահանջագիրն, անհիմն է, քանի որ հայտարարության իրավացիությունը գործում է ոչ թե էլեկտրոնային ստորագրման պահից, այլ գործում է Ընկերության հիմնադրման օրվանից՝ 17.01.2000թ.: Բացի այդ՝ Ընկերության հաշվապահը, Ընթացակարգին հայտ ներկայացնելու պահին, Ընկերության տնօրենի թիվ Ա-65 հրամանի համաձայն գտնվել է հերթական արձակուրդի մեջ, իսկ հաշվապահի պարտականությունները նույն հրամանով դրվել են Ընկերության գործադիր տնօրեն Մաքսիմ Միսակյանի վրա:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը ներկայացրել է ամենացածր գնային առաջարկը, իսկ Ընթացակարգին ներկայացված հայտը համապատասխանում է ՀՀ օրենսդրության պահանջներին, Ընկերությունը բողոքով խնդրել է չեղյալ հայտարարել ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից կազմակերպված «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.07.2017թ. թիվ 2-4 արձանագրության 1.6 կետը և «Գազկոմշին» ՍՊԸ-ին ճանաչել «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

«Գազկոմշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 04.08.2017թ. ժամը 10:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 03.08.2017թ. թիվ 02/27.1/4893-17 գրությամբ ներկայացրել է «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ տնօրենի հայտարարությունը բանկային փաստաթղթերի ստորագրման բացառիկ իրավասության մասին ավելի ուշ է ստորագրվել, քան հայտի ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը, իսկ տուժանքի մասին համաձայնագրի վրա բացակայում է հաշվապահի ստորագրությունը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից դեռևս 2014թ. տրված պարզաբանումը՝ տուժանքի մասին համաձայնագրի վրա հաշվապահի ստորագրության առկայության պարտադիր լինելու հարցի վերաբերյալ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը:

Պատվիրատուն գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված բոլորը ենթակա է մերժման:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 04.08.2017թ. ժամը 10:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/24 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/24 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար «Երևանի թիվ 91 դպրոց» ՊՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով «Գազկոմշին» ՍՊԸ-ն 06.07.2017թ. հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի հրավերի թիվ 9 հավելված հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրի և մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրի

վավերապայմաններով սահմանվել է ընկերության տնօրենի և գլխավոր հաշվապահի ստորագրության պահանջը:

3. «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտի թիվ 9 հավելված հայտի ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնագիրը և մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը, էլեկտրոնային եղանակով ստորագրվել է միայն Ընկերության տնօրեն Մաքսիմ Միսակյանի կողմից:

4. Ընկերությունը հայտով ներկայացրել է հայտարարություն՝ համաձայն որի «Գազկոմշին» ՍՊԸ-ի բանկային փաստաթղթերի ստորագրման բացառիկ իրավասությունը պատկանում է միայն Ընկերության տնօրեն Մաքսիմ Միսակյանը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.07.2017թ. թիվ 2-2 արձանագրության 1-ին կետի 1.1. ենթակետով արձանագրել է, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտում առկա տնօրենի հայտարարությունը բանկային փաստաթղթերի ստորագրման բացառիկ իրավասության մասին ավելի ուշ է ստորագրվել, քան հայտի ապահովման վճարման պահանջագիրը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.07.2017թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 2-4 արձանագրության 1-ին կետի 1.6 ենթակետով կայացրած որոշմամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը մերժել է՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության հայտում առկա հայտի ապահովումը՝ մասնակցի կողմից միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնագիրը ստորագրված չէ հաշվապահի կողմից, ինչպես նաև տնօրենի հայտարարությունը բանկային փաստաթղթերի ստորագրման բացառիկ իրավասության մասին ավելի ուշ է ստորագրվել, քան հայտի ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը:

* 7. «Գազկոմշին» ՍՊԸ-ի տնօրենի 03.07.2017թ. թիվ Ա-65 հրամանի համաձայն՝ 2017 թվականի հուլիսի 6-ից Ընկերության հաշվապահ Մարգարիտ Աբոյանին հատկացվել է հերթական արձակուրդ 10 աշխատանքային օր տևողությամբ:

Նույն հրամանի համաձայն՝ հաշվապահի պարտականությունը 06.07.2017-20.07.2017թթ. դրվել է Ընկերության գործադիր տնօրեն Մաքսիմ Թեմուրի Միսակյանի վրա:

8. «Գազկոմշին» ՍՊԸ-ն 04.08.2017թ. թիվ 36 գրությամբ Խորհրդին ներկայացրել է «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ -ի կողմից 04.08.2017թ. տրված թիվ 1896-13 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 17.09.2014թ.-ից սպասարկվում է «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում և հաշվի բացման օրվանից Ընկերության գործարքներում բանկային փաստաթղթեր ստորագրելու իրավունք ունի Ընկերության տնօրեն Մաքսիմ Միսակյանը:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Գազկոմշին» ՍՊԸ-ի 31.07.2017թ. բողոքը, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 03.08.2017թ. թիվ 02/27.1/4893-17 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ հաշվապահական հաշվառման փաստաթղթերը ստորագրելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է կազմակերպության ղեկավարը, ընդ որում, կարող է սահմանվել ստորագրության իրավունքի պաշտոնակարգություն՝ կախված տվյալ անձի զբաղեցրած պաշտոնից, գործառնության ոլորտից, էությունից և դրամական արժեքի մեծությունից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում:

Կարգի 44-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հայտերի բացման նիստում նույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝ բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

Նույն կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Հրավերին կից տուժանքի մասին համաձայնագրի 1.2 ենթակետի համաձայն՝ որպես մասնակցության հայտի ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 14.10.2016թ. «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 131-Ն՝ որոշումն ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 300-Ն, 2015 թվականի հունվարի 13-ի թիվ 2-Ն, 2000 թվականի փետրվարի 1-ի թիվ 18 և 2000 թվականի ապրիլի 25-ի թիվ 97 որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները»-ի (այսուհետ նաև՝ Կանոններ) 5-րդ կետի 1-ին ենթակետի

համաձայն՝ նույն կարգը սահմանում է հետևյալ վճարահաշվարկային փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները՝

1) վճարահաշվարկային փաստաթղթեր, որոնք պարունակում են կարգադրություն դրամական միջոցները մուտքագրելու, ելքագրելու, վճարելու, փոխանցելու, վճարումը (փոխանցումը) չեղյալ համարելու վերաբերյալ և (կամ) հաստատում (հավաստում) են ծառայությունների մատուցումը և (կամ) գործարքների կատարումը՝

ա. Վճարման հանձնարարական,

բ. Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարական,

գ. Վճարման պահանջագիր,

դ. Մուտքի հայտարարություն (մուտքի հայտարարագիր, մուտքի անդորրագիր, մուտքի օրդեր),

ե. Ելքի հայտարարություն (ելքի հայտարարագիր, ելքի անդորրագիր, ելքի օրդեր),

զ. Դրամական միջոցների փոխանցման դիմում (փոխանցման անդորրագիր),

է. Դրամական միջոցների ստացման դիմում (ստացման անդորրագիր),

Կանոնների 22-րդ կետի 1-ին ենթակետի 21-րդ պարբերության համաձայն՝ վճարողի ստորագրությունը հանդիսանում է «Վճարման պահանջագիր» փաստաթղթի նվազագույն վավերապայմանը, որը պարտադիր լրացվում է վճարողի կողմից վճարման պահանջագրի ակցեպտավորման դեպքում:

Ընթացակարգի հրավերով նախատեսված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» 18.ա կետի համաձայն՝ վճարման պահանջագրի «վճարողի ստորագրությունը» ոչ պարտադիր դաշտը ստորագրվում է վճարողի կողմից:

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար «Երևանի թիվ 91 դպրոց» ՊՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 06.07.2017թ. ներկայացրած հայտի թիվ 9 հավելված հայտի ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնագիրը և մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը էլեկտրոնային եղանակով համապատասխանաբար 06.07.2017թ. ժամը 19:45:49-ին և 06.07.2017թ. ժամը 19:46:02-ին ստորագրվել է միայն Ընկերության տնօրեն Մաքսիմ Միսակյանի կողմից:

Ընկերությունը հայտին կցել է հայտարարություն (ստորագրվել է 06.07.2017թ. ժամը 19:46:09-ին) համաձայն որի «Գազկոմշին» ՍՊԸ-ի բանկային փաստաթղթերի ստորագրման բացառիկ իրավասությունը պատկանում է Ընկերության տնօրեն Մաքսիմ Միսակյանին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.07.2017թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 2-4 արձանագրության 1-ին կետի 1.6 ենթակետով կայացրած որոշմամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը մերժել է՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության հայտում առկա հայտի ապահովումը՝ մասնակցի կողմից միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնագիրը, ստորագրված չէ հաշվապահի կողմից, ինչպես նաև տնօրենի հայտարարությունը բանկային փաստաթղթերի ստորագրման բացառիկ իրավասության մասին ավելի ուշ է ստորագրվել, քան հայտի ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը:

Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերոհիշյալ հիմքերով մերժելով «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը, գործել է ոչ իրավաչափ հետևյալ հիմնավորմամբ.

Այսպես՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ի տնօրենի 03.07.2017թ. թիվ Ա-65 հրամանի համաձայն՝ 2017 թվականի հուլիսի 6-ից Ընկերության հաշվապահ Մարգարիտ Աբոյանին հատկացվել է հերթական արձակուրդ 10 աշխատանքային օր տևողությամբ: Ընդ որում նույն հրամանի համաձայն՝ հաշվապահի պարտականությունները 06.07.2017-20.07.2017թթ. դրվել են Ընկերության գործադիր տնօրեն Մաքսիմ Թեմուրի Միսակյանի վրա:

ՀՀ ֆինանսների նախարարության 29.03.2017թ. թիվ 04/73-3/5583-17 պարզաբանման համաձայն՝ եթե կազմակերպությունում հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացվում է հաշվապահական ծառայության կամ կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով, ապա տուժանքի մասին համաձայնագիրը գլխավոր հաշվապահի մասով պետք է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվի համապատասխանաբար հաշվապահական ծառայության ղեկավարի կամ հաշվապահի կողմից, իսկ տնօրենի մասով՝ տնօրենի կողմից:

Միևնույն ժամանակ նույն պարզաբանումը սահմանում է, որ եթե հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ, ապա տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվում է առանց գլխավոր հաշվապահի ստորագրության: Ընդ որում, եթե տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվել է միայն կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, նկատի ունենալով, որ տվյալ դեպքում հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ:

«Գազկոմշին» ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար «Երևանի թիվ 91 դպրոց» ՊՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացրել է 06.07.2017թ., հետևաբար նշված ժամանակահատվածում, համաձայն Ընկերության տնօրենի Ա-65 հրամանի, Ընկերության հաշվապահը գտնվել է արձակուրդում և վերջինիս պարտականությունները 06.07.2017-20.07.2017թթ. դրված են եղել Ընկերության տնօրենի վրա:

Խորհուրդն արձանագրում է, որ «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացնելու օրվա դրությամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ի հաշվապահական հաշվառումը վարվել է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ, հետևաբար տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվել է միայն կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ՝ առանց գլխավոր հաշվապահի ստորագրության, ուստի նման պայմաններում, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 29.03.2017թ. թիվ 04/73-3/5583-17 պարզաբանման, Ընկերության հայտը ենթակա չէ մերժման:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված այն փաստին, որ բանկային փաստաթղթեր ստորագրելու բացառիկ իրավասության վերաբերյալ հայտարարությունը ավելի ուշ է ստորագրվել, քան հայտի ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը, ապա Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նման դիրքորոշումն անհիմն է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է, որ հաշվապահական հաշվառման փաստաթղթերը ստորագրելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է կազմակերպության ղեկավարը:

Տվյալ դեպքում Խորհուրդն արձանագրում է, որ «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 04.08.2017թ. տրված թիվ 1896-13 տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 17.09.2014թ.-ից սպասարկվում է «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում և հաշվի բացման օրվանից Ընկերության գործարքներում բանկային փաստաթղթեր ստորագրելու իրավունք ունի Ընկերության տնօրեն Մաքսիմ Միսակյանը: Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի տնօրենի կողմից բանկային փաստաթղթեր ստորագրելու բացառիկ իրավասության վերաբերյալ հայտարարության՝ տուժանքի մասին համաձայնագրից և վճարման պահանջագրից ուշ ստորագրված լինելու հանգամանքը չի կարող դիտվել որպես Ընկերության հայտը մերժելու հիմք, քանի որ բանկային փաստաթղթեր ստորագրելու Ընկերության տնօրենի բացառիկ իրավասությունը ծագել է դեռևս 17.09.2014թ. և քննարկվող հայտարարությունը ստորագրելու ժամկետը որևէ ազդեցություն չի կարող ունենալ դեռևս 17.09.2014թ.-ից ծագած կարգավորման վրա:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար «Երևանի թիվ 91 դպրոց» ՊՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ 25.07.2017թ. նիստի թիվ 2-4 արձանագրության 1-ին կետի 1.6 ենթակետը դադարեցնելու պահանջի մասով բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

• Ինչ վերաբերում է «Գազկոմշին» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ բողոքով ներկայացված պահանջին, ապա «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, Խորհուրդը չունի մասնակցին ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելու լիազորություն, հետևաբար «Գազկոմշին» ՍՊԸ-ի բողոքը նշված մասով ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 31.07.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. դադարեցնել «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.07.2017թ. նիստի թիվ 2-4 արձանագրությունը՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը արձանագրության մեջ նշված հիմքերով մերժելու մասով.

2. «Գազկոմշին» ՍՊԸ-ին «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով բաց ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու պահանջի մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ